

Սեպտեմբերի 30-ին Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեններ Հասմիկ Ղազարյանը, Ռազմիկ Առաքելյանը և միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը այցելեցին Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի Կողբ համայնք՝ գրականության նվիրատվության նպատակով: Գրականություն նվիրաբերվեց Կողբի Շանթ Հովհաննիսյանի անվան համայնքային գրադարանին: Ազգային գրադարանը կարևորում է նաև զորամասերում գործող գրադարանների գործունեությունը: Այցը շարունակվեց Կողբի N զորամասի գրադարան: Նախկինում ևս Ազգային գրադարանի աշխատակիցներն այցելել են նշված զորամասի գրադարան՝ գրականության նվիրատվության նպատակով:

Կարևորելով զորամասերի գրադարանների դերը գրադարանային գործում, ՀՀ անկախության 25-ամյակի առիթով, սահմանամերձ շրջանների հայրենանվեր պաշտպանության, զինվորների գերազանց մարտունակության, կրթադաստիարակչական, գրի և ընթերցանության դերը կարևորելու գործում ունեցած ավանդի համար Տավուշի մարզի Կողբի N զորամասին Հայաստանի ազգային գրադարանը պարգևատրեց «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով: